

h-87

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎԱԵՓՅԱՆ ԱՐԹՈՒՐ ՈՎԶՄԻԿԻ

ԻՐՆ ԹԱՅՄԻՅԱՅԻ «ՄԱՋՍՏՈՒԱ ԱՌ-ՈՒՍԱՄԻԼ ՈՒՄ-Լ-ՄԱՍՄԻԼ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՈՐՊԵՍ  
ՄԻՋՆԱԴՐԱՐՅԱՆ ԻՍԼԱՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Է.00.02 «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ

պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսություն

ՍԵՂՍԱԳԻՐ

*Դա արգանտեզն երան  
պրոֆեսոր Զ. Դավ հանրապետության*

ԵՐԵՎԱՆ – 2007

78-5

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Դ. Ա. Յովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ա. Պ. Փոլադյան  
պատմական գիտությունների թեկնածու Յ. Մ. Քոչարյան


Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական ճանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2007թ. հունիսի 18-ին, ժ. 13.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի 006 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 375019, Երևան, Մարշալ Բաղդանյան պող., 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2007թ. մայիսի 17-ին:

Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար,  
պատմական գիտությունների թեկնածու



Ա. Կ. Շաքարյան

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

VII դարում, իսլամի առաջացումից հետո, ձևավորվեցին իսլամի հիմնական՝ սուննի և շիա ուղղությունները, հետագայում նաև՝ իսլամական կրոնական-իրավական դպրոցները՝ մազհաբները, աստիճանաբար ի հայտ եկան կրոնաքաղաքական տարբեր ուղղություններ ու հոսանքներ: 1258թ. Աբբասյան խալիֆայության կործանումից հետո, երբ վերջնականապես քայքայվեց միասնական պետությունը և անկում ապրեց խալիֆայի ինստիտուտը, որը մարմնավորում էր թե՛ հոգևոր, թե՛ աշխարհիկ իշխանությունը, իսլամի ներսում շարունակում էին զարգանալ և ի հայտ գալ տարաբնույթ հոսանքներ, ինչը հանգեցնում էր ումմայի պառակտմանը: Ժամանակի մուսուլման աստվածաբանները և կրոնի գիտակները ստեղծված իրավիճակը բացատրում էին Ղուրանից և սուննայից, ինչպես նաև վաղ շրջանի իսլամական համայնքի կյանքի տարբեր ոլորտները կարգավորող նորմերից հեռանալու, անթույլատրելի նորարարություններ ներմուծելու հանգամանքներով: Ստեղծված իրողությունների արդյունքում իսլամի հիմնարար սկզբունքների նորովի մեկնաբանման փորձ արեց միջնադարյան խոշորագույն աստվածաբան Թակի աղ-Ղին Ահմադ իբն Թայմիյան՝ /1268-1323/՝ ձգտելով ընդհանրացնել սուննի իսլամի ամենապահպանողական ուղղության՝ հանբալիականության գաղափարախոսությունը:

Իբն Թայմիյայի հիմնական հանգումները՝ կապված իսլամական համայնքի քաղաքական, սոցիալական, կրոնական, ծիսական ոլորտների հետ, արտացոլված են «Մաջմուա առ-հասաիլ ուալ-մասաիլ»՝ «Ուղերձների և հարցերի ժողովածուում», որտեղ տեղ են գտել նաև նրա՝ տարբեր թեմաներին վերաբերող ֆեթվաները:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է միջնադարյան իսլամական հասարակության մեջ կրոնական աշխարհընկալման, սուննի իսլամի հանբալիական ուղղության վերջնական ձևավորման ու ամբողջացման, ինչպես նաև միջնադարյան իսլամական հասարակության մեջ տեղի ունեցող կրոնական, գաղափարախոսական գործընթացների ուսումնասիրության անհրաժեշտությամբ և կարևորությամբ:

Թեման արդիական է նաև իսլամագիտության տեսանկյունից, քանի որ թույլ է տալիս

վերլուծել միջնադարյան իսլամի՝ որպես արժեքային համակարգի, զարգացման ընթացքն ու առանձնահատկությունները:

Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նաև խորքային մակարդակում հասկանալ արդի շրջանի իսլամական կրոնա-քաղաքական արմատական կազմակերպությունների /«Մուսուլման եղբայրներ», «Ալ-ջիհադ», «Ալ-գամաա ալ-իսլամիյա» և այլն/ գաղափարախոսությունների արժեքային համակարգերը և դրանց վրա հիմնված իսլամական ծայրահեղական-պահպանողական կազմակերպությունների գործողությունների դրդապատճառները: Թեման կարևոր է այն առումով, որ արաբական իսլամական առաձին երկրների՝ մասնավորապես Սաուդյան Արաբիայի Թագավորության, պետական գաղափարախոսության հիմքում ընկած է վահաբականությունը, որի տեսաբանը՝ Իբն Աբդ ալ-Վահհաբը, եպես ազդվել է Իբն Թայմիյայի ուսմունքից:

Հիշյալ թեմայի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության հարակից պետություններում քաղաքական իսլամի տարբեր դրսևորումների գնահատման տեսանկյունից:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրության նպատակն է հետազոտել Իբն Թայմիյայի «Ուղերձների և հարցերի ժողովածուն», որի ուսումնասիրման համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- Դիտարկել իսլամի հիմնական ճյուղերի և իսլամական կրոնափրավական դպրոցների՝ *մազհաբների* առաջացման նախադրյալներն ու զարգացման ընթացքը:
- Ուսումնասիրել հանրալիական *մազհաբի* արժեքային համակարգը:
- Քննական վերլուծության ենթարկել Իբն Թայմիյայի «Մաջնուա առ-ռասախլ ուալ-մասախլ» աշխատությունը՝ կառուցվածքային և բովանդակային առումով:
- Կատարել քննարկվող նյութի իմաստային և համեմատական վերլուծություն:
- Ուսումնասիրել Իբն Թայմիյայի առաջ քաշած գաղափարների ազդեցությունը իսլամական հետազա կրոնա-քաղաքական շարժումների արժեքային համակարգերի վրա:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դեռևս չի արժանացել հատուկ ուսումնասիրության և առանձին աշխատությամբ չի ներկայացվել: Ներկայացվող ուսումնասիրությունն այդ առումով առաջին գիտական փորձն է:

Գիտական նորույթ է ատենախոսության մեջ Իբն Թայմիյայի հայացքները ներառող «Մաջնուա առ-ռասախլ ուալ-մասախլ» աշխատության, ինչպես նաև Իբն Թայմիյայի՝ հանրալիական գաղափարախոսությանը նվիրված առանձին դրույթների թարգմանությունը և ուսումնասիրությունը:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 7-րդ դարից մինչև 14-րդ դարն ընկած ժամանակաշրջանը, որը ներառում է «արդարակյաց խալիֆաների» (632-661թթ), Օմայյան և Աբբասյան խալիֆայությունների գոյության, ինչպես նաև խալիֆայության կործանման շրջանը: Ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեմայի ժամանակագրությունը ընդգրկում է իսլամում հիմնական ուղղությունների ձևավորման, կայացման և հետագա զարգացման, ինչպես նաև Իբն Թայմիյայի գործունեության ժամանակաշրջանը:

#### ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության համար որպես հիմնական աղբյուր ծառայել է Իբն Թայմիյայի «Մաջնուա առ-ռասախլ ուալ-մասախլ»<sup>1</sup> աշխատությունը, ինչպես նաև Ղուրանը<sup>2</sup>, որի հանգատողերը ատենախոսության շրջանակներում թարգմանելու ժամանակ համեմատական կարգով օգտագործվել են Ղուրանի Ի.Յու. Կրաչկովսկու ռուսերեն<sup>3</sup>, ինչպես նաև Ա. Ամիրխանեանցի<sup>4</sup> հայերեն թարգմանությունները:

Աշխատությունը գրվել է արաբերեն, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա:

1 تقي الدين أحمد ابن تيمية، مجموعة الرسائل والمسائل، دار الكتب العلمية، بيروت، لبنان، ١٤٢١ هـ - ٢٠٠٠ م  
2 Արաբերեն ճիշտ տառադարձությամբ հնչում է «ալ-Կուր'ան», սակայն ատենախոսության մեջ կիրառվում է հայ մատենագրության և արևելագիտության մեջ ամրագրված «Ղուրան» ձևը:  
3 Коран. Перевод и комментарий И. Ю. Крачковского, М, 1986.  
4 Ղուրան, թարգմ. Աբր.Ամիրխանեանց, Վառնա 1909:

Հայցողի առջև կանգնած խնդիրների լուծմանը նպաստել են Իբն Թայմիյայի, հանքալիական ուղղության վերաբերյալ խորհրդային և օտար հետազոտողների արժեքավոր աշխատությունները: Իսլամի ծագման շրջանում Արաբիայում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական գործընթացների բովանդակությանն անդրադարձել է Լ.Վ. Նեգրյան իր «Հասարակական կարգը Յյուսիսային և Կենտրոնական Արաբիայում V-VII դդ.»<sup>5</sup> աշխատության մեջ: Ավելի լայն շրջանի սոցիալական կառուցվածքի ուսումնասիրություն է կատարել Ռ. Լևին իր «Իսլամի սոցիալական կառուցվածքը»<sup>6</sup> մենագրության մեջ: Օ.Գ. Բոլշակովն իր «Արաբական խալիֆայության պատմությունը»<sup>7</sup> երկհատորյակում մանրամասն վերլուծում է պատմաքաղաքական և սոցիալ-տնտեսական իրադրությունը՝ սկսած նախաիսլամական շրջանից (V դ.) մինչև VII դ. վերջը:

Իսլամի ծագման և հետագա զարգացման շրջանի պատմական գործընթացները ճիշտ ըմբռնելուն մեծապես նպաստել են Ֆ. Հիթիի «Արաբների պատմություն»<sup>8</sup>, Ն.Հ. Հովհաննիսյանի «Արաբական երկրների պատմություն»<sup>9</sup>, Ե.Ա. Բելյակի «Արաբները, իսլամը և արաբական խալիֆայությունը վաղ միջնադարում»<sup>10</sup> և Ա.Ե. Կրիմսկու «Մուսուլմանության պատմությունը»<sup>11</sup> աշխատությունները:

Ատենախոսության համար որպես իսլամագիտական ընդհանուր տեսական հիմք ծառայել են Վ.Վ. Բարտոլդի «Իսլամի պատմության և արաբական խալիֆայության վերաբերյալ աշխատություններ»<sup>12</sup>, Ի.Պ. Պետրուշևսկու «Իսլամն Իրանում VII-XV դդ.»<sup>13</sup>, Գ.Է. Ֆոն Գրյունեբաումի «Ղասական իսլամ»<sup>14</sup>, Ա. Մասսեի «Իսլամ. Պատմական ակնարկ»<sup>15</sup>, Մ.Ու.

<sup>5</sup> Негря Л. В. Общественный строй Северной и Центральной Аравии в V-VII вв., М., Наука, 1981.

<sup>6</sup> Levy R., The Social Structure of Islam, Cambridge University Press, 1962

<sup>7</sup> Большаков О. Г., История Халифата. Ислам в Аравии (570- 633), т. I, М., Большаков О. Г., История Халифата. Эпоха великих завоеваний (633-656), т. II, М., РАН, 2000 . Большаков О. Г., История Халифата. Между двух гражданских войн 656-696, т. III, М., «Восточная литература» РАН, 1998.

<sup>8</sup> Hitti Ph., A History of the Arabs, London, 1946.

<sup>9</sup> Հովհաննիսյան Ն.Հ., Արաբական երկրների պատմություն, Արաբները VII դարից մինչև 1516թ., հ.1, Երևան 2003:

<sup>10</sup> Беляев Е. А., Арабы, ислам и арабский халифат в раннее средневековье, М., Наука, 1965.

<sup>11</sup> Крымский А. Е., История мусульманства. Самостоятельные очерки, обработки и дополненные переводы из Дохи и Гольдциэра, ч. 1-3, М., 1914.

<sup>12</sup> Бартольд В.В. Работы по истории ислама и арабского халифата. Сочинения, т.6, М., Наука, 1966.

<sup>13</sup> Петрушевский И.П., Ислам в Иране в VII-XV веках., Ленинград 1966.

<sup>14</sup> Грюнебаум Фон Г. Э., Классический Ислам, М.: Наука, 1986.

<sup>15</sup> Массе А., Ислам. Очерки истории, Москва, Наука, 1982.

Ուոտի «Իսլամական քաղաքական միտք՝ հիմնական դրույթները»<sup>16</sup>, Է. Ռոզենբալի «Միջնադարյան իսլամի քաղաքական միտք»<sup>17</sup>, ինչպես նաև Ժանիև և Դոմինիկ Սուրդելների «Ղասական իսլամի քաղաքակրթությունը»<sup>18</sup> աշխատությունները:

Պ.Ա. Գրյագնկիչը և Մ.Բ. Պիոտրովսկին հողվածների շարքով<sup>19</sup> շոշափում են իսլամի տարածման ժամանակաշրջանի ներքաղաքական իրավիճակը՝ կապված արաբների էթնիկ գիտակցության ձևավորման, պետական ինստիտուտների կայացման, ինչպես նաև իսլամում տարածայնությունների առաջացման ուսումնասիրության հետ: Ուշադրության են արժանի Ս. Մ. Պրոգորովի «Իսլամը որպես գաղափախոսական համակարգ»<sup>20</sup> աշխատությունը, որտեղ հեղինակն ուսումնասիրում է տարբեր աստվածաբանների միջնադարյան դոկտորաֆիկ աշխատանքները, «Գերագույն իշխանության շիական (իմամական) հայեցակարգը»<sup>21</sup> հողվածը, ուր նա քննարկում է գերագույն իշխանության շիական հայեցակարգի առաջացման հիմնական պատճառներն ու դրույթները:

Իբն Թայմիյայի հայացքների նշանակությունը մեր օրերում հստակ պատկերացնելու համար օգտագործվել է նաև Աբդուլլահի Ահմեդ ան-Նահիմի «Իսլամական բարեփոխման ճանապարհին»<sup>22</sup> աշխատությունը, որտեղ հեղինակը մի շարք կարևոր հետևություններ է անում Իբն Թայմիյայի գաղափարների կիրառական գործածության վերաբերյալ:

Չնայած մեզանում Իբն Թայմիյայի և նրա աշխատանքների մասին ուսումնասիրություններ չկան, հարկ է նշել, որ հայ արևելագիտությունը բազմիցս ուսումնասիրել է իսլամի քաղաքական, սոցիալական և մշակութաբանական կողմերը, ինչի

<sup>16</sup> Montgomery Watt W., Islamic Political Thought: the Basic Concepts, Edinburgh University Press, 1987.

<sup>17</sup> Rosenthal E., Political Thought in Medieval Islam, Cambridge, 1962

<sup>18</sup> Доминик Сурдель, Жанин Сурдель. «Цивилизация классического ислама» Екатеринбург, 2006.

<sup>19</sup> Грязневич П. А. Проблемы изучения истории возникновения ислама, в кн. Ислам религия, общество, государство, М.: Наука, 1984, стр. 5-19, Он же, Ислам и государство (к истории государственно-политической идеологии раннего ислама), в кн. Ислам религия, общество, государство, М.: Наука, 1984, стр. 189-204, Он же, Развитие исторического сознания арабов (VI-VIII вв.), в кн. Очерки истории арабской культуры V-XV вв., М.: Наука, 1982, стр.75-156, Он же, К вопросу о праве на верховную власть в мусульманской общине в раннем исламе, в кн. Ислам религия, общество, государство, М.: Наука, 1984, стр. 161-175. Пиотровский М. Б. Светское и духовное в теории и практике средневекового ислама, в кн. Ислам религия, общество, государство, М.: Наука, 1984, стр. 175-189, Он же, Пророческое движение в Аравии VII в, в кн. Ислам религия, общество, государство, М.: Наука, 1984, стр. 19-28, Он же, Мухаммед. пророки, лжепророки, кахины, в кн. Ислам в истории народов Востока, М.: Наука, 1981, стр. 9-18.

<sup>20</sup> Прозоров С.М. „Ислам как идеологическая система“, Ин-т востоковедения, С – Петербург, 2004

<sup>21</sup> Прозоров С.М. Шинитская (имамитская) доктрина верховной власти, – В кн. Ислам религия, общество, государство. – М.: Наука, 1984, стр. 204-212

<sup>22</sup> Абдуллахи Ахмед ан-Наим. «На пути к исламской реформации» фонд Андрея Сахарова, Москва, 1999

ապացույցն են արաբագետներ Ն. Յ. Յովհաննիսյանի<sup>23</sup>, Դ.Ա. Յովհաննիսյանի<sup>24</sup>, Յ. Մ. Քոչարյանի<sup>25</sup> և Ա.Ա. Փաշայանի<sup>26</sup> ուսումնասիրությունները:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքում դրված է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքը, որը հնարավորություն են տալիս դիտարկել իրադարձությունները ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և դիալեկտիկական կապի մեջ: Այս սկզբունքների վրա հիմնվելով, աշխատանքում օգտագործվել են պատմահամեմատական, պատմավերլուծական քննության և միջդիսցիպլինար հետազոտության մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս դիտարկել ատենախոսության մեջ արծածված խնդիրները մեկ ամբողջական համակարգում:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշվող դրույթները գործնականում կարող են օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատությունների ինչպես նեղ մասնագիտական դասընթացներում, այնպես էլ ընդհանուր կրթական ծրագրերում: Աշխատանքում տեղ գտած տարբեր թեմաներով առանձին հատվածների և ենթագլուխների առաջին անգամ իրականացված թարգմանությունները կարող են կիրառվել նաև իսլամագիտական ուսումնասիրություններում:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի

<sup>23</sup> Оганесян Н. Активизация ислама: характер, специфика и последствия,- в кн. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока, Ереван, 1986.

<sup>24</sup> Оганесян Д. А., Ценностная система ислама: начало пути. // Отечественные записки. М., 2004 номер 1, с. 478-490. Он же. Хабар и халис. XII Республиканская конф. Молодых востоковедов. Ереван 1987. Он же. Хабар в культурном сознании общества доисламской и раннеисламской Аравии. - В кн. Проблемы арабской культуры. - М.: Наука, 1987. Он же. Время и история в исламе и христианстве. - Материалы объединенной сессии кафедр арабск. филологии и семитологии МГУ, ЛГУ, ТГУ и ЕГУ. М., 1992. Он же. К вопросу о переосмыслении категорий времени и пространства. - В сб. Тезисы участников конференции кафедр арабистики и семитологии Ереванского, Московского, Санкт-Петербургского и Тбилисского университетов. - С. Петербург, 2000. Он же. Критерии истины в Коране, в кн.: Сборник статей, посвященный 80-летию академика К.Г. Церетели, Тбилиси 2003, с. 149-157.

<sup>25</sup> Յ.Մ. Քոչարյան, «Ունեմալի կարգավիճակի բնորոշումը Ղուրանում և վաղ իսլամական սկզբնաղբյուրներում», Ատենախոսություն պ.գ.թ. գիտական աստիճանի հայցման համար, Երևան, 2005թ.

<sup>26</sup> Ա. Փաշայան, Իսլամական կրոններան կազմակերպությունը. Նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը դարաբաղյան հակամարտության նկատմամբ, - Երևան, 2003:

արաբական երկրների բաժնում: Աշխատանքում քննարկվող հիմնական խնդիրներն ու դրույթները լուսաբանվել են տարբեր պարբերականներում և ժողովածուներում («Արաբագիտական ուսումնասիրություններ», «Գիտություն և տեխնիկա») հրատարակած հոդվածներում:

#### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (որոնցից յուրաքանչյուրը համապատասխանաբար կազմված է ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում է հետազոտվող թեմայի գիտական արդիականությունն ու քաղաքական հրատապությունը, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև՝ աշխատանքի մեթոդաբանական հիմքն ու գիտական նորույթը: Ներածությունը ներառում է նաև աղբյուրագիտական նյութի հավաքագրման համառոտ պատմությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼԽՈՒՄ՝ «ԿՐՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԻՆՉԵՎ ԻԲՆ ԹԱՅԻՅԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ», քննարկվում է VII-XIV դդ. պատմական, քաղաքական և կրոնական իրավիճակն արաբական արևելքում, բացատրվում են իսլամի հիմնական ուղղությունների և իսլամական կրոնաիրավական դպրոցների՝ *մազհաբների* առաջացման պատճառներն ու շարժառիթները, մանրամասն ուսումնասիրության են ենթարկվում հանրալիական գաղափարախոսության հիմնադրույթները, հակիրճ ներկայացվում է Աբբասյան խալիֆայության կործանումից հետո ձևավորված ժամանակաշրջանը, երբ ապրել է Իբն Թայմիյան:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ *«Հիմնական ուղղությունների և հոսանքների առաջացումն իսլամում»*, քննարկվում են Մուհամմադ մարգարեի մահից հետո իսլամական համայնքում առաջացած խնդիրների և տարակարծությունների պատճառները, գերագույն իշխանության խնդրի շուրջ սուննիական, շիական և խարիջիական տեսակետները: Ներկայացվում են իսլամական համայնքի հասարակական կյանքի տարբեր ոլորտները կարգավորող կրոնաիրավական համակարգի թերի կողմերը: Ուսումնասիրության են ենթարկվում իշխանության համար պայքարի առանձին դրսևորումները, ինչպես նաև 7-րդ դարում իսլամական համայնքի ներսում տեղի ունեցած այն ռազմական բախումները, որոնք

արդյունքում մեկընդմիջտ պառակտվում է համայնքի միասնությունը:

Գլխի երկրորդ «Սուննիական և շիական մազհաբների առանձնահատկությունները» ենթազխում, վերլուծության են ենթարկվում սուննի և շիա դպրոցների միջև առկա տարբերություններն ու մասնությունները, նրանց տեսակետները մուսուլմանական դոգմատիկայում կարևոր տեղ զբաղեցնող այնպիսի լուրջ խնդիրների շուրջ, ինչպիսիք են՝ հավատի, ծանր մեղք գործած մարդուն պատասխանատվության ենթարկելու, բարձրագույն իշխանության ժառանգման օրինականության հարցերը: Առանձնահատուկ տեղ է հատկացվում իսլամում բոլոր ուղղությունների կողմից ընդունելի կրոնական ինստիտուտի /կամ կրոնական հեղինակության/ բացակայության, «ուղղափառություն» և «աղանդ» եզրերի օգտագործման հետ կապված հարցերին:

Երրորդ՝ «Սուֆիական, մու՛թազիիական և աշարիական գաղափարախոսությունների առանձնահատկությունները» ենթազխում դիտարկվում են իսլամական խորհրդապաշտական՝ սուֆիական, մու՛թազիիական և աշարիական ուղղությունների ստեղծման նախադրյալները, զարգացման ընթացքն ու գաղափարախոսական արժեհամակարգերը: Ներկայացվում են սուննիականության հետ այս ուղղության հակասությունները: Քննարկվում են վերջիններիս տեսակետները մասնավորապես Ղուրանի արարված կամ չարարված լինելու, Ալլահի հատկությունների, գոյի միասնության, իսամի և խալիֆայի կարգավիճակի հետ կապված վիճելի խնդիրների շուրջ:

Չորրորդ ենթազխում, որն անվանվել է «Չանբալիական գաղափարախոսության հիմնադրույթները», նախևառաջ ներկայացվում է ուսմունքի հիմնադիր Սիմաղ Իբն Չանբալի կենսագրությունը: 833թ. պատմականորեն համընկում է միհնայի շրջանին, երբ տարբեր ուղղությունների բազմաթիվ հայտնի աստվածաբաններ ընդունում են Աբբասյան խալիֆա ալ-Մամունի /813-833/ պարտադրած տեսակետը Ղուրանի արարված լինելու մասին: Ի տարբերություն նրանց, Իբն Չանբալը դիմանում է փորձությանը, ինչն էլ շրջադարձային նշանակություն է ունենում հանբալիական ուսմունքի ժողովրդականության և արագ տարածման գործում: Այս ենթազխում ամենայն մանրամասնությամբ ներկայացվում են հանբալիների ձևակերպումները նորարարությունների *լբիղա* արգելման և իսլամի հիմնադրույթների վերաբերյալ: Խոսվում է նաև հետագա դարերում հանբալիների գործունեության և խալիֆայության կյանքում ունեցած ազդեցության մասին: Չամեմատական կարգով քննարկման են ենթարկվում նաև միջնադարի խոշոր աստվածաբան, հայտնի փիլիսոփա և շաֆիական ուղղության ֆակիհ ալ-Ղազալիի հայացքները:

Առաջին գլխի հինգերորդ՝ «Կրոնական, քաղաքական իրավիճակն արաբական արևելքում 13-14-րդ դարերում» ենթազխում, ներկայացվում է արաբական խալիֆայության տարբեր տարածաշրջաններում տիրող ճգնաժամային իրավիճակը: Նախ խոսվում է եգիպտոսում և Յյուսիսային Աֆրիկայի արևմտյան մասում՝ Մադրիբում, տեղի ունեցող պատմական իրադարձությունների մասին, այնուհետև նկարագրվում է Իսպանիայի ռեկոնկիստայի շրջանը, ինչպես նաև եգիպտական մամլուքների շարունակական հաղթանակները Սիջերկրական ծովի արևելյան շրջաններում խաչակիրների վերջին հենակետերը և Կիլիկիան Չայաստանը նվաճելու ճանապարհին: Այնուհետև ներկայացվում է խալիֆայության արևելյան հատվածի օրհասական վիճակը, մայրաքաղաք Բաղդադի նվաճումը մոնղոլների կողմից 1258թ-ի փետրվարի 10-ին, Աբբասյան խալիֆայության կործանումը և դրանից հետո տիրող անկայուն վիճակը կրոնական դաշտում:

Վեցերորդ՝ «Իբն Թայմիյայի կենսագրությունը, ստեղծագործությունները» վերջին ենթազխում ընդհանուր ներկայացվում է Իբն Թայմիյայի կյանքը և մեզ հասած ստեղծագործությունները, ինչպես նաև դրանց հակիրճ բնութագիրը:

Ատենախոսության երկրորդ՝ ««ՄԱՋՆՈՒԱ ԱՌ-ՌԱՍԱԻԼ ՌԱԼ-ՄԱՍԱԻԼ» ԺՂՈՎԱԾՈՒԻ ԿՈՄՊՂՁԻՑԻԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», գլխում ներկայացվում է դոկտորաֆիլ ժանրին պատկանող աշխատությունների նկարագրությունը և այդ համատեքստում Իբն Թայմիյայի ժողովածուն, ուսումնասիրվում են «Մաջնուա առ-ռասաիլ ու ալ-մասաիլ» ժողովածուի ժանրային, կառուցվածքային առանձնահատկությունները, վերլուծության են ենթարկվում ժողովածուի առանձին գլուխների և ենթազխումների կառուցվածքը:

Գլխի առաջին ենթազխում՝ ««Մաջնուա առ-ռասաիլ ու ալ-մասաիլ» գրքի ժանրային առանձնահատկությունները», նախ քննարկվում են դոկտորաֆիլ գրականության առանձնահատկությունները և դրա ստեղծման պատճառները: Չատկապես կարևոր է նշել այն հանգամանքը, որ իսլամում հոգևորի և աշխարհիկի, կրոնի և քաղաքականության միասնականությունն ու սերտաճառությունն էր պատճառը, որ աստվածաբանական վեճերը ստացել էին կրոնաքաղաքական նշանակություն և դարձել իսլամի անբաժանելի մասը: Այս իրողությունները հիմք դարձան իսլամական աստվածաբանական-կրոնական հատուկ ժանրի՝ դոկտորաֆիլայի ստեղծման համար:

Մուսուլմանական դոկտորաֆիլայի զարգացման նոր փուլ է համարվում 9-10-րդ դարերը, երբ հայտնվում են իսլամի պատմության մասին համընդհանուր, ընդգրկում

աշխատանքներ, առավել ամբողջական տեսք է ստանում իսլամական դոգմատիկ համակարգը: Այդ համակարգի մշակման գործում առարկայական ներդրումն է ունենում վաղ շրջանի մուսուլմանական դոկտորաֆիան, որի շրջանակներում էլ կազմավորվում են երեք հիմնական դպրոցները կամ դոկտորաֆիկ ավանդույթները՝ սուննիական, շիական և մու՛թազիլիական:

Իբն Թայմիյայի «Մաջնուա առ-ռասաիլ ուալ-մասաիլ» աշխատությունը ուշ միջնադարի տիպիկ դոկտորաֆիկ աշխատանք է, որի միջոցով հեղինակը զարգացնում և ամբողջացնում է հանրալիական ուղղության դոկտորաֆիկ ավանդույթները: Հեղինակն իր աշխատությունը ստեղծել է հիմնականում հարց ու պատասխանի սկզբունքով, ինչը բնորոշ է դոկտորաֆիկ ժանրին:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «ժողովածուի կառուցվածքային առանձնահատկությունները», ուսումնասիրվում են ժողովածուում առկա հատորների, գլուխների և ենթագլուխների ընդհանուր ծավալները, քննարկվող նյութի ծավալների և բովանդակության միջև եղած կապը, նյութի ընտրության հարցը, տրվում են բոլոր գլուխների թարգմանությունները: Կատարվում է ենթագլուխների և գլուխների թեմատիկ դասակարգում ըստ ուսումնասիրվող նյութի:

Երրորդ՝ «Սուանձին գլխի, ենթագլխի կառուցվածքը» ենթագլխում մանրամասն կառուցվածքային վերլուծության է ենթարկվում գլուխների և ենթագլուխների շարադրման սկզբունքը:

Չնայած ենթագլուխներն ու գլուխները շատ դժվար են ենթարկվում դասակարգման, այնուհանդերձ նշվում է, որ «Մաջնուա առ-ռասաիլ ուալ-մասաիլ» աշխատության հատորների առանձին ենթագլուխները կազմված են երկու կամ երեք հատվածներից: Երկու հատվածանոց ենթագլուխներում նախաբանը, որպես այդպիսին, բացակայում է: Հեղինակը միանգամից անցնում է նյութի քննարկմանը՝ ավարտելով այն կարճ վերջաբանով: Երեք հատվածանոց ենթագլուխներում կա նախաբան, որտեղ հեղինակը կամ հղումներ է անում համախոհ աստվածաբանների և սալաֆիների խոսքերից կամ էլ անորոշ դեմքով մեջբերում է անում անհայտ անձանց խոսքերից, որոնք սխալ ուղի են բռնել և որոնց հարցերին պատասխանել է պետք:

Ենթագլուխներում գերակշռող մեծամասնություն են կազմում մեջբերումները Ղուրանից, սուննայից, լայնորեն օգտագործված են նաև հադիսների ամենահեղինակավոր ժողովածուները, մարգարեի սահիբների, ավանդապաշտ աստվածաբանների խոսքերն ու

գործերը: Կան որոշ ենթագլուխներ, որտեղ բացառապես հեղինակի խոսքն է կամ մեջբերումներ են արվում միայն Ղուրանից և սուննայից:

Ատենախոսության ԵՐՐՈՐԴ ԳԼԽՈՒՄ՝ ««ՄԱՋՆՈՒԱ ԱՌ-ՌԱՍԱԻԼ ՈՒԱԼ-ՄԱՍԱԻԼ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄԱՍՍԱՅԻՆ ԱՌԱՆՉՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ », քննարկվում են հետևյալ թեմաները:

Գլխի առաջին ենթագլխում «ժողովածուի բովանդակային վերլուծությունը», հետազոտվում են աշխատությունում հեղինակի կողմից ամենաշատ հիշատակվող և կարևորություն ներկայացնող հարցերը, մասնավորապես՝ բարեպաշտության և անհավատության տեսակները, գոյի միասնության և դրա մասին հայտնի քննարկումները, Ալլահի ատրիբուտների հետ կապված դատողությունները, իսլամի կրոնաժեսակական կողմին վերաբերող բազմաթիվ հարցեր, մարգարեական ճշմարտության, «Ալլահի տեղի ու դիրքի» վերաբերյալ բազմաթիվ հարցեր: Հատուկ ուշադրության են արժանանում հատկապես գոյի միասնության, Ղուրանի արարվածության, նորարարությունների դեմ պարտադիր պայքարի, քրիստոնյաների և հրեաների, ինչպես նաև հեղինակի տեսանկյունից ճշմարիտ ուսմունքից շեղվածների մասին թեմաները:

Այս ենթագլխում առաջին անգամ թարգմանաբար ներկայացվում են հատվածներ կամ ամբողջական ենթագլուխներ վերը նշված թեմաների մասին, կատարվում են եզրահանգումներ:

Գլխի երկրորդ ենթագլխում՝ «Օգտագործված աղբյուրների, հղումների դասակարգումը, տեղեկատվության բնույթը», ուսումնասիրության են ենթարկվում ամբողջ ժողովածուում իբն Թայմիյայի կատարած մեջբերումներն ու հղումները:

Ղուրանից և Մուհամմադ մարգարեի սուննայից ուղղակի մեջբերումներից բացի, որոնք գերակշիռ մեծամասնություն են կազմում այս աշխատությունում, հեղինակը հղումներ է անում 27 տարբեր աստվածաբաններին, մարգարեի ամենանշանավոր զինակիցներին, առաջին չորս խալիֆաներին և հադիսների ամենահայտնի ժողովածուների հեղինակներին:

«Մաջնուա առ-ռասաիլ ուալ-մասաիլ» աշխատության մեջ մեծ թիվ են կազմում նաև հեղինակի մեջբերումները հադիսներից: Իբն Թայմիյան օգտագործում է բոլոր վեց հեղինակավոր ժողովածուների հադիսները: Այնուամենայնիվ, ամենախիշարժանը Ահմադ իբն Հանբալի «Մուսնադից» կատարված մեջբերումների քանակն է: Օգտագործված հաճախականությամբ այն երրորդն է Ղուրանից և մարգարեի մասին ուղղակի հիշատակումներից հետո:

Ատենախոսության երրորդ գլխի վերջին ենթագլխում՝ «Իբն Թայմիյայի հայացքների նշանակությունը, մուսուլմանական համայնքի «իդեալական մոդելը»», կատարված վերլուծության հիման վրա քննության է ենթարկվում Իբն Թայմիյայի գաղափարներն ու դրանց ազդեցությունը ու՛ Ֆիջնադարյան իսլամական հասարակությունում, մանրամասն ներկայացվում է նրա պատկերացրած իդեալական մուսուլմանական ունման, որին պետք է ձգտի յուրաքանչյուր բարեպաշտ մուսուլման. «Ալլահը միակ արարիչն է, և միայն նա է արժանի մարդկանց կողմից երկրպագության, սակայն մուսուլմանները հեռացել են այդ սկզբունքից և սկսել երկրպագել տարբեր սրբերի՝ ներմուծելով տարբեր նորարարություններ»: Եզրափակելով՝ ներկայացվում է Իբն Թայմիյայի՝ միաստվածության և նորարարությունների դեմ անզիջում պայքարի անհրաժեշտության վերաբերյալ գաղափարները և դրանց նշանակությունը մեր օրերում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, ատենախոսն եզրակացնում է.

1. Մուհամմադ մարգարեի մահից որոշ ժամանակ անց իսլամում ի հայտ են գալիս առաջին տարակարծություններն ու վեճերը, ժամանակի ընթացքում ձևավորվում են իսլամի տարբեր ուղղություններ ու հոսանքներ, որոնք ավելի շատ ապակայունացնող, քան միավորիչ դեր են կատարում հասարակության մեջ: Այս իրողությունները զգալիորեն նպաստում են հանրալիական ուղղության աստվածաբան Իբն Թայմիյայի գաղափարախոսական ուղղվածության ձևավորմանը:
2. Իբն Թայմիյայի «Մաջնուա առ-ռասաիլ ուա-լ-մասաիլ» ժողովածուն իր բնույթով միջնադարյան դոկտորաֆիկ աշխատանք է, որում ավարտուն և ամբողջական տեսքով արտացոլված են հանրալիական ուղղության հիմնարար սկզբունքները:
3. Ժողովածուի գլուխներին և ենթագլուխներին, ընդհանուր առմամբ, բնորոշ է ամբողջական և կուռ կառուցվածք, ժանրային և բովանդակային որոշակի առանձնահատկություններ:
4. Իր տեսակետները հաստատելու համար հեղինակն իր աշխատություններում լայնորեն օգտագործում է մեջբերումներ, որոնց մեջ ճնշող մեծամասնություն են կազմում հղումները Ղուրանից, մարգարեի սուննայից և Իբն Յանբալի «Մուսնադից», ինչը ևս մեկ անգամ ընդգծում է հեղինակի հավատարիմ մնալը հանրալիական դպրոցի

ավանդույթներին:

5. Իբն Թայմիյան «Մաջնուա առ-ռասաիլ ուա-լ-մասաիլ» ժողովածուում քննարկում է իսլամական հասարակության համար կարևորություն ներկայացնող հարցերի բավական լայն շրջանակ՝ սկսած սոցիալական, կրոնածիսական հարցերից մինչև կրոնափիլիսոփայական բարդ խնդիրներ: Խոսելով Ահլ ալ-քիթաբի, այսինքն՝ «Գրոց մարդկանց» մասին, նա նշում է, որ որոշ իսլամական հոսանքներ ու մազհաբներ ավելի «անհավատ են և մոլորված», քան «Գրոց մարդիկ»:
6. Իբն Թայմիյայի պատկերացրած իդեալական իսլամական ունման միակ ճշմարիտ ճանապարհն է բոլոր մուսուլմանների համար, որին պետք է հասնել՝ առաջնորդվելով միաստվածության, նորարարությունների դեմ անզիջում պայքարի, մարգարեի ունմայի ավանդույթները վերականգնելու կարգախոսներով:
7. Զգտելով ընդհանրացնել հանրալիական գաղափարախոսության հիմնադրույթները՝ հեղինակը հաստատում է Ղուրանի արարված չլինելու, գոյի միասնության ուսմունքի սխալ կողմերի և միաստվածության մասին իր տեսակետները:
8. Ժողովածուում հեղինակը հանգամանորեն բացատրում է սուֆիական, շիական, խարիջիական, մութազիլիական և աշարիական մազհաբների հետ իր տարածայնությունների պատճառները:



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ  
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Իբն Թայմիյայի հայացքները մուսուլմանական համայնքի «իդեալական մոդելի» համատեքստում, Արաբագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2007, հ. Բ, էջ 57-65:
2. Իբն Թայմիյայի «Մաջնուա առ-ռասաիլ ուա-լ-մասաիլ» ժողովածուի կառուցվածքային առանձնահատկությունները, Արաբագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2007, հ. Բ, էջ 66-73:
3. Կրոնական, քաղաքական իրավիճակն արաբական արևելքում 13-14-րդ դարերում, «Գիտություն և տեխնիկա» անսագիր, համար 4, Երևան, 2007, էջ 15-18:

ОВСЕПЯН АРТУР РАЗМИКОВИЧ  
СБОРНИК „МАДЖМУА АР-РАСАИЛ УА-Л-МАСАИЛ. ИБН ТАЙМИИ КАК ИСТОЧНИК  
ИСТОРИИ СРЕДНЕВЕКОВОГО ИСЛАМА

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности  
07.00.02 – „Всемирная история„  
Защита состоится 18 июня 2007 г. по адресу: 375019, г. Ереван, проспект Маршала Баграмяна,  
24г, Институт Востоковедения НАН РА

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению сложившейся религиозно-политической ситуации в арабском халифате и сборника „Маджмуа ар-расаил уа-л-масаил„ средневекового богослова ханбалитского направления Ибн Таймийи.

В 7 веке, вскоре после появления ислама, сформировались разные течения и направления, которые выработали собственные, иногда сильно отличающиеся друг от друга позиции и точки зрения в решении различных религиозно-политических и догматических проблем. Падение Аббасидского халифата в 1258г. способствовало дестабилизации и углублению идейных расхождений в мусульманском обществе. В сложившейся ситуации виднейший ханбалитский правовед средневековья Таки ад-Дин Ахмад ибн Таймийя сделал своеобразную попытку заново утвердить основные принципы и правила суннитского ислама, стремясь тем самым обобщить и окончательно сформировать ценностную систему ханбалитской идеологии.

Основные представления и принципы Ибн Таймийи, регулирующие политические, социальные, религиозные и ритуальные аспекты жизни мусульманского общества, были отражены в пятитомном сборнике „Маджмуа ар-расаил уа-л-масаил„ (Сборник посланий и вопросов), где нашли место и фетвы богослова по различным темам.

Проблематика данной диссертационной работы способствует глубочайшему и системному исследованию процессов, происходящих в исламском мире. В этом плане данная проблематика особенно актуальна для независимой Армении, если иметь ввиду те обстоятельства, что большая часть населения трех соседних стран мусульмане, а в арабских странах, Иране, Турции проживает значительное количество армян и существуют армянские общины.

Для достижения цели диссертантом поставлены следующие задачи: 1) исследовать причины формирования, а также развитие основных религиозно-политических, философско-богословских и

религиозно-правовых течений и школ в исламе, 2) изучить ценностную систему ханбалитского мазхаба, 3) детально проанализировать сборник „Маджмуа ар-расаил уа-л-масаил„ в композиционном и смысловом планах, 4) в целях комплексного изучения данной проблематики сделать сравнительный анализ актуальных проблем исследуемого материала, 5) исследовать влияние идей, выдвинутых Ибн Таймийей, на религиозно-политические течения и идеологии позднего периода.

Работа состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложения.

Во введении обосновывается актуальность темы исследования, дается обзор литературы и источников, использованных в работе, определены цели и задачи данного исследования, его теоретическое и практическое значение.

В первой главе - „Религиозная ситуация до деятельности Ибн Таймийи„ - дается общий обзор религиозно-политической ситуации мусульманского востока, объясняются причины и предпосылки появления различных религиозно-правовых течений и мазхабов в исламе, изучаются основные положения ханбалитской идеологии, а также кратко излагается историческая ситуация после крушения Аббасидского халифата.

Во второй главе - „Композиция сборника „Маджмуа ар-расаил уа-л-масаил„, и структурные особенности„ - анализируется сборник „Маджмуа ар-расаил уа-л-масаил„ в контексте аналогичных доксографических трудов средневековья, исследуются жанровые и структурные особенности отдельных глав и подглав сборника.

В третьей главе - „Анализ идей сборника „Маджмуа ар-расаил уа-л-масаил„, и смысловые особенности„ - изучаются отдельные темы, обсуждаемые в сборнике, их смысловые особенности, анализируются ссылки и цитаты, использованные автором из Корана, Сунны пророка, виднейших богословов и правоведов. Описывается идеальная модель мусульманского общества с точки зрения Ибн Таймийи, а также рассматриваются вопросы, связанные со значением взглядов автора и их дальнейшим влиянием на различные толки и течения современного исламского мира.

В заключении подводятся итоги исследования, обобщаются выводы, сделанные в ходе написания данной работы.

ARTHUR HOVSEPYAN

THE COLLECTION „MAJMUA AR-RASAIL UA-L-MASAIL„ OF IBN TAYMIYA AS SOURCE OF THE HISTORY OF MEDIEVAL ISLAM

